ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«17» հունվարի 2025 թ. № 44

ՄԱՆՎԵԼ ԻԼՅԱՅԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 120-Ա որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19062024-06-0001 վկայականը, Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող և Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետության սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով ստեղծված մրցույթային հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 16-ի թիվ 1/1-1 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-095-0246-0039 կադաստրային ծածկագրով 0,273 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի արոտավայր հողատեսքի հողամասը՝ 4 400 (չորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ տարեկան վարձավճարով, 25 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով, տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Մանվել Իլյայի Սահակյանին (ծնված՝ 10.10.1953թ.):

2. Մանվել Իլյայի Սահակյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել տարեկան վարձավճարների գանձումը:

4. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Ե.Գրիգորյանին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հունվարի 17
ք.Սպիտակ